

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Մերի Համբարձումի Մուրադյան

Հոդվածը ստացվել է՝ 05.04.2022թ., գրախոսման ուղարկվել է՝ 05.04.2022թ., տպագրման երաշխավորվել է՝ 18.04.2022թ.

Ներածություն: Բնակչության պարենային անվտանգության ապահովումը 21-րդ դարի առաջնային լուծում պահանջող մարտահրավերներից է: Խնդիրը առավել ակնառու դարձավ 20-րդ դարի կեսերից, երբ պարենային արտադրանքների պակասուրդը և դրա հետևանքները ամբողջ աշխարհում առավել հրատապ դարձան:

Պարենային անվտանգությունը սերտորեն փոխկապակցված է սոցիալ-տնտեսական կայունության և երկրի տնտեսական զարգացման հետ: Պարենային անվտանգությունը համարվում է յուրաքանչյուր երկրի ռազմական անվտանգության անբաժան մաս: Այն մի համակարգ է, որն ուղղված է բավարար քանակի և անհրաժեշտ որակի, մարդու առողջության համար անվտանգ պարենամթերքներով ապահովմանը, որը միևնույն ժամանակ հասանելի կլինի հասարակության բոլոր անդամների համար:

Երկրի պարենային անվտանգությունը ապահովվում է տեղական արտադրանքի արտադրության և սննդամթերքների ներմուծման միջոցով: Այս իրավիճակում կարևոր է, որ երկիրը կարողանա բավանսավորել սեփական արտադրության և ներմուծման ծավալները՝ ներմուծումից կախվածության նվազեցման համար: Ներկայացված խնդիրը **արդիական** է Հայաստանի համար:

Հոդվածի նպատակը: Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել պարենային անվտանգության և բնակչության կենսամակարդակի բարձրացման փոխկապակցվածությունը և գտնել ուղիներ ՀՀ-ում պարենային անվտանգության ապահովման շնորհիվ բնակչության կենսամակարդակի բարձրացման համար:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար **խնդիր է** դրվել.

- ✓ Ուսումնասիրել պարենային անվտանգության էությունը,
- ✓ Վերլուծել պարենային անվտանգության հիմնախնդիրների էվոլյուցիան,
- ✓ Բացահայտել ՀՀ-ում պարենային ապահովման թույլ կողմերը:

Մեթոդաբանություն: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար հիմք են հանդիսացել արտասահմանյան և հայրենական տնտեսագետների ուսումնասիրությունները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տրամաբանական, վիճակագրական և համեմատական վերլուծության մեթոդները:

Գրականության վերլուծություն: 1970-ական թվականների կեսերին գիտական շրջանառության մեջ դրվեց «Պարենային անվտանգություն» հասկացությունը, երբ ի տարբերություն զարգացած երկրների, որտեղ պարենային ապ-

րանքների արտադրության խնդիր գոյություն չունեն, «երրորդ աշխարհի» երկրներում զանգվածային բնույթ էր կրում սովն ու թերսնումը¹:

Ջրի, սննդի և էներգետիկ անվտանգության ապահովումը բոլոր երկրների հիմնական առաջնահերթություններից է: Անվտանգության յուրաքանչյուր տեսանկյան ձեռքբերումը պահանջում է համակարգված մոտեցումների իրականացում, ինչպես յուրաքանչյուր երկրի ներսում, այնպես էլ դրանից դուրս²: «Պարենային անվտանգություն» տերմինի առավել ամբողջական բացահայտման համար անհրաժեշտ է հստակեցնել «անվտանգության» հասկացությունը: Այն բացատրվում է, որպես մի իրավիճակ, որտեղ ինչ-որ մեկին կամ ինչ-որ բանին վտանգ չի սպառնում: Անվտանգությունը տարբեր ոլորտներում՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական, և տարբեր մակարդակներում՝ պետական, մասնավոր և այլն, իր իմաստը գտնում է պաշտպանության մեջ՝ տարբեր բնույթի սպառնալիքներից³:

Պարենային անվտանգության խնդիրների ուսումնասիրությունը սկսել է լուսաբանվել 20-րդ դարի սկզբներից, այնպիսի նշանավոր գիտնականների կողմից, ինչպիսիք են Ն.Դ.Կոնդրատևը, Ա.Վ.Չայանովը, Վ.Ֆ.Մայերը, Վ.Ս.Ռուտզայգերը և շատ ուրիշներ⁴: Ավելին Կոնդրատևը և Չայանովը պարենային անվտանգության խնդրի առաջին համակարգողներն են եղել Ռուսաստանում: Իսկ անցյալ դարի 60-ական թվականներին Մայերը և Ռուտզայգերը ուսումնասիրել են արտադրության և սպառման փոխկապակցվածությունը և սահմանել են դրանց միջև օպտիմալ համամասնությունը⁵:

Պարենային անվտանգության քաղաքականության իրականացման գործում զգալի տեղ ունեն միջազգային կառույցները, հատկապես ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը՝ FAO-ն, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը՝ IFAD-ը, Պարենի համաշխարհային ծրագիր՝ WFP-ը, Պարենային անվտանգության գլոբալ ինդեքսը՝ GFSI, գլոբալ սովի ինդեքսը՝ GHI և շատ այլ կազմակերպություններ: Այս միջազգային կառույցների շնորհիվ է սահմանվում աշխարհում պարենային անվտանգության հետ կապված խնդիրները, վեր են հանվում աշխարհում առավել պարենապես խոցելի երկրները⁶:

¹ Ավետիսյան Ս., Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրներ/. –Եր.: Տնտեսագետ, 2014 – էջ.16- («Ամբերդ» մատենաշար):

² НИЦ МКВК, Водная, продовольственная и энергетическая безопасность в Центральной Азии: вводный анализ - преимущества межотраслевых решений, 2021 г., стр. 3

<https://www.oecd.org/env/outreach/Water%20Food%20Security%20in%20Central%20Asia%20RUS.pdf> (դիտման օրը 11.03.2022).

³ Тихомирова В. А., Продовольственная безопасность: сущность понятия, //Вестник РЭУ им. Г. В. Плеханова 2015, № 6 (84), стр. 124.

⁴ Նույն տեղում


⁵ Ускова Т.В., Селименков Р.Ю., Анищенко А.Н., Чекавинский. А.Н., Продовольственная безопасность региона, монография, – Вологда : ИСЭРТ РАН, 2014. –с. 6.

⁶ Հարությունյան Կ. և ուրիշներ, Պարենային անվտանգության գնահատում և մոդելավորում կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում, - Եր.: Տնտեսագետ, «Ամբերդ մատենաշար 48» 2021, էջ 21-25:

Վերլուծություն: Ներկայիս զարգացման փուլում գլոբալացման գործընթացը յուրաքանչյուր երկրի համար ոչ միայն հնարավորությունների բացահայտման միջոց է, այլ նաև առաջացնում է բազում վտանգներ և ռիսկեր¹:

Տնտեսության այն վիճակը, որտեղ յուրաքանչյուր անձ ցանկացած ժամանակ ունի բավարար ֆիզիկական, սոցիալական և տնտեսական հասանելիություն անվտանգ և սննդարար սննդամթերքների ձեռք բերման համար, որը բավարարում է նրա պարենային կարիքները և նախասիրությունները, ապահովում է ակտիվ և առողջ կյանք, սահմանվում է որպես պարենային անվտանգություն²:

Աշխարհն ունի բոլոր հնարավորությունները՝ բնակչությանը բավականաչափ սննդամթերքով ապահովելու համար: Բայց և այնպես ըստ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) տվյալների, միայն 2017 թվականին 821 մլն մարդ կամ աշխարհի բնակչության 10.9%-ը թերսնվածներ են³: Գծապատկերի տեսքով ներկայացնենք աշխարհում թերսնման պատկերը:



Գծապատկեր 1. Թերսնման մակարդակը աշխարհում 2001-2019թթ, %⁴

Ինչպես երևում է գծապատկերից 2017 թվականին գրանցվել է աշխարհում բնակչության թերսնման ամենացածր ցուցանիշը՝ 8.2 %: Սակայն նկատենք, որ գնալով այդ ցուցանիշը սկսել է աճել և արդեն 2020 թվականին մոտ 768 մլն մարդ լիարժեք չի կարողանում բավարարել պարենի նվազագույն պահանջները: Այս ցուցանիշը 2019 թվականի համեմատ ավել է 118 մլն մարդ-ով⁵, որի գլխավոր

¹ Մարկոյան Ա. Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ. — Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2005. – էջ 3:

² Տատկոմիտե ՇՈՒ, Методологические рекомендации по системе показателей для оценки состояния продовольственной безопасности в странах СНГ, Москва 2019, стр. 13.

³ Նույն տեղում

⁴ <https://data.worldbank.org/indicator/SN.ITK.DEFC.ZS> (նիսման օրը 14.03.2022)

⁵ ՓՊՕ «Положение в области продовольственной безопасности и питания в мире -2021», Глава 2 Продовольственная безопасность и питание в мире стр. 12 <https://www.fao.org/3/cb4474ru/cb4474ru.pdf> (նիսման օրը 14.03.2022).

պատճառներից մեկը COVID-19¹ համավարակն ու դրա հետևանքներն են: Համավարակի հետևանքով աշխարհով մեկ իրականացվող սահմանափակումները դարձան ոչ միայն տնտեսական անկման այլ նաև պարենային անվտանգության վիճակի վատթարացման պատճառ²:

Պարենային անվտանգությունը ժամանակակից պետությունների համար ունի առաջնային նշանակություն, կազմելով ռազմական անվտանգության անբաժանելի մաս: Պարենային անվտանգության հետ կապված հարցերը առավել սրությամբ դրված են անբարենպաստ կլիմայական պայմաններ ունեցող կամ սակավահող երկրների առջև: Այդ երկրների բնակչության բարձր խտությունը և սակավահողությունը թույլ չեն տալիս սեփական ռեսուրսների հաշվին ապահովել անհրաժեշտ սննդամթերքների պահանջարկը, այսինքն՝ պարենային տեսակետից լինել ինքնապահովված երկիր: Այդպիսի երկրներից է նաև Հայաստանի Հանրապետությունը, որի համար պարենային անվտանգության խնդիրների հաջող լուծումը խիստ արդիական է³:

ՀՀ-ում պարենային անվտանգության մակարդակի գնահատման համար անհրաժեշտ է առաջին հերթին տալ պարենային ապահովվածության վիճակի գնահատականը: Ինչպես նաև ուսումնասիրել պարենային անվտանգության երկու կարևոր բաղադրիչները՝ պարենամթերքի հասանելիությունը և օգտագործումը⁴: Երկրի պարենային ապահովվածության կարևորագույն ցուցանիշներից մեկը բնակչության մեկ շնչի հաշվով սննդամթերքով ապահովվածության և դրանց սպառման մակարդակն է: Ըստ ՀՀ առողջապահության նախարարության մարդու համար էներգետիկ նվազագույն օրաբաժինը սահմանվում է 2412 կկալ, որը կոչվում է նաև պարենային «նվազագույն զամբյուղ»⁵: Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2020 թվականի համար ներկայացված է աղյուսակ 1-ում:

¹ World Health Organization, <https://www.who.int/ru/emergencies/diseases/novel-coronavirus-2019> (դիտման օրը 21.03.2022)

² ФАО «Положение в области продовольственной безопасности и питания в мире -2021», Предисловие <https://www.fao.org/3/cb4474ru/cb4474ru.pdf> (դիտման օրը 14.03.2022).

³ Չախմախյան Բ., Մկրտչյան Վ., Հայաստանի Հանրապետությունում պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրների շուրջ, Հայաստան «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, N2, Եր- 2004թ, էջ 21:

⁴ Հարությունյան Կ. և ուրիշներ, Պարենային անվտանգության գնահատում և մոդելավորում կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում,- Եր.: Տնտեսագետ, «Ամբերդ մատենաշար 48» 2021, էջ 29:

⁵ Չախմախյան Բ., Մկրտչյան Վ., Հայաստանի Հանրապետությունում պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրների շուրջ, Հայաստան «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, N2, Եր- 2004թ, էջ 27:

Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2019-2020թ. միջին ընթացիկ գներով¹

	Պարենամթերքի անվանումը	Օրական սպառման նորման 1 շնչի հաշվով, կգ		Տարեկան սպառման նորման 1 շնչի հաշվով, կգ		Օրական էներգետիկան 1 շնչի հաշվով, կկալ		Միավորի գինը, դրամ		Տարեկան նորմայի արժեքը 1 շնչի հաշվով, դրամ	
		2019	2020	2019	2020	2019	2020	2019	2020	2019	2020
1.	Հացամթերք	0.355	0.355	-	-	992.2	992.2	-	-	77 671.6	81 038.7
1.1	հաց	0.25	0.25	91.3	91.3	622.5	622.5	503.8	522.7	45 996.9	47 722.5
1.2	այլուր	0.02	0.02	7.3	7.3	70.6	70.6	392.5	430.0	2 865.3	3 139.0
1.3	մակարոնեղեն	0.015	0.015	5.5	5.5	55	55	575.2	620.5	3 163.6	3 412.8
1.4	ձավարեղեն (բրինձ)	0.05	0.05	18.3	18.3	175.5	175.5	777.4	832.9	14 226.4	15 242.1
1.5	ընդեղեն (լոբեղեն)	0.02	0.02	7.3	7.3	68.6	68.6	1564.3	1578.4	11 419.4	11 522.3
2.	Մսամթերք (տավարի միս)	0.1	0.1	36.5	36.5	203	203	3054.8	2 940.6	111 500.2	107 331.9
3.	Կաթնամթերք այդ թվում՝	-	-	-	-	339.7	339.7	-	-	89 922.8	90 471.5
3.1	կաթ, լիտր	0.2	0.2	73	73	122	122	371.6	376.0	27 126.8	27 448.0
3.2	կաթնաշոռ	0.01	0.01	3.7	3.7	7.5	7.5	2391.7	2452.7	8 849.3	9 075.0
3.3	կենդանական յուղ	0.02	0.02	7.3	7.3	143.4	143.4	4910.4	4974.1	35 845.9	36 310.9
3.4	պանիր	0.025	0.025	9.1	9.1	66.8	66.8	1989.1	1938.2	18 100.8	17 637.6
4.	Կարտոֆիլ	0.25	0.25	91.3	91.3	167.5	-	215.6	167.0	19 684.3	15 247.1
5.	Բանջարեղեն (կաղամբ, գրվյա սոխ)	0.3	0.3	109.5	109.5	87	87	197.9	156.5	21 670.1	17 136.8
6.	Միրգ (խնձոր)	-	-	0.2	0.2	73 96	73 96	473.7	560.8	34 580.1	40 938.4
7.	Շաքար	0.05	0.05	18.3	18.3	193.5	193.5	266.9	355.5	4 884.3	6 505.7
8.	Չու, հատ	0.5	0.5	182.5	182.5	40	40	62.6	69.0	11 424.5	12 592.5
9.	Բուսական յուղ	0.02	0.02	7.3	7.3	176.8	176.8	672.2	834.4	4 907.1	6 091.1
10.	Մարգարին	0.01	0.01	3.7	3.7	72	72	1085.2	1052.2	4 015.2	3 893.1
11.	Չուկ	0.03	0.03	11	11	44.4	44.4	2552.4	2509.6	28 076.4	27 605.6
	Ընդամենը	-	-	-	-	2412.1	2412.1	-	-	408 336.5	408 852.4

Իրականացնելով համեմատությունն աղյուսակում ներկայացված տվյալների և նախորդ տարվա ցուցանիշների հետ կնկատենք, որ մի շարք ապրանքատեսակների գները թանկացել են, իսկ դրա հետ մեկտեղ նվազագույն սպառողական զամբյուղի մնացել է անփոփոխ: Մասնավորապես թանկացել են հացամթերքների տարեկան նորմայի արժեքը 3367,1 դրամով, այդ թվում հաց՝ 1725,6 դրամով, այլուր՝ 273,7 դրամով, մակարոնեղենը՝ 249,2 դրամով, ձավարեղեն՝ 1015,7 դրամով, կաթնամթերքը՝ 548,7 դրամով, այդ թվում՝ կաթը՝ 321,2 դրամով, միրգը՝ 6358,3 դրամով, շաքարավազը՝ 1621,4 դրամով, ձու՝ 1168 դրամով:

Հատկանշականը այն է, որ նվազել են մսամթերքի տարեկան նորմայի արժեքը՝ 4168,3 դրամով:

Նվազագույն սպառողական զամբյուղի ընդհանուր տարեկան նորմայի արժեքը 2020թ. 2019թ. համեմատությամբ ավելացել է 515,9 դրամով: Հատկանշա-

¹ ՀՀ ՎԿ, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվար-դեկտեմբեր» Հավելված 2, Հետաքրքրաշարժ վիճակագրություն, էջ 253 «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ. հունվար-դեկտեմբեր», Հավելված 2, Հետաքրքրաշարժ վիճակագրություն, էջ 275:

կան է, որ այս ցուցանիշը 2021թ. ավելացել է արդեն 22944,2 դրամով՝ կազմելով 431796,6¹ դրամ: Բոլոր ապրանքատեսակները 2021թ. թանկացել են:

Որպեսզի ստանանք բնակչության կողմից պարենամթերքների սպառման իրական պատկերը, անհրաժեշտ է ուսումնասիրել բնակչության տարբեր սոցիալական խմբերի կողմից սննդամթերքների սպառման ծավալները: Աղյուսակի տեսքով ներկայացնենք ՀՀ բնակչության տարբեր քվինտիլներում պարենամթերքի սպառման մակարդակները: Վերլուծության մեջ բնակչությունը բաժանվել է 5 խմբերի (20-ական %)՝ ըստ սպառման ծավալների: Առաջին խումբը՝ բնակչության ամենաքիչ սպառող (ամենաաղքատ) 20 տոկոսն է, իսկ 5-րդ խումբը՝ ամենամեծ ծավալներով սպառողը: Նույն տրամաբանությամբ բաժանվում են քվինտիլային խմբերի՝ ըստ եկամուտների²:

Աղյուսակ 2

ՀՀ-ում մեկ շնչի հաշվով սպառված պարենամթերքի էներգետիկ արժեքը ըստ քվինտիլային խմբերի, 2012-2020թթ., կկալ/օր³

	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Քվինտիլ 1	1420	1386	1399	1439	1372	1309	1311	1195	1222
Քվինտիլ 2	1865	1798	1802	1833	1774	1687	1706	1553	1607
Քվինտիլ 3	2229	2153	2101	2110	2093	1966	1995	1833	1888
Քվինտիլ 4	2703	2638	2451	2471	2521	2323	2364	2201	2226
Քվինտիլ 5	3780	3791	3196	3220	3822	3107	3172	3020	2969

Վերլուծելով աղյուսակը կարող ենք ասել, որ ամենահարուստ 20 %-ի՝ քվինտիլ 5-րդ խմբի սպառման էներգետիկ արժեքը ավելի քան 2.5 անգամ գերազանցում է քվինտիլ 1 խմբի՝ ամենաաղքատ 20%-ի սպառման արժեքին:

Ըստ Պարենի և գյուղատնտեսության միջազգային կազմակերպության նվազագույն կենսաապահովման էներգետիկ արժեքը կազմում է 2100 կկալ/օր⁴: Այս ցուցանիշը համեմատելով աղյուսակ 2-ի տվյալների հետ կարող ենք ասել, որ ՀՀ-ում բնակչության մեծամասնության դեպքում պարենամթերքի սպառման էներգետիկ արժեքը ցածր է 2100 կկալ/օր մակարդակից: Սկսած 2008թ.-ից նվազագույն կենսաապահովման էներգետիկ արժեքը կազմում է 2232 կկալ/օր⁵:

¹ ՀՀ ՎԿ, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021թ. հունվար-մարտին», Հավելված 2, Հետաքրքրաշարժ վիճակագրություն, էջ 349:

² Տնտեսական հետազոտությունների և զարգացման աջակցության կենտրոն (ERDSC), ՀՀ բնակչության եկամուտներն իշխանափոխությունից հետո, «Լույս» հիմնադրամ, 2021թ, էջ 21 (դիտման օրը՝ 18.03.2022) :

https://www.luys.am/img/artpic/small/37461a198e9175753a31incomes_report_final.pdf

³ Աղբյուրը ՀՀ ՎԿ, Հրապարակումներ ըստ տարիների, Պարենային ապահովություն և աղքատություն, Պարենի օգտագործում, 2010-2020թթ <https://armstat.am/am/?nid=82> (դիտման օրը՝ 18.03.2022):

⁴ World Food Programme (WFP), Research, Assessment and Monitoring Division. 2020, p.17 <https://docs.wfp.org/api/documents/WFP-0000074198/download/> (դիտման օրը՝ 18.03.2022).

⁵ Հարությունյան Վ. և ուրիշներ, Պարենային անվտանգության գնահատում և մոդելավորում կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում, - Եր.: Տնտեսագետ, «Ամբերդ մատենաշար 48» 2021, էջ 33:

Այս ցուցանիշը համեմատելով 2020 թվականի տվյալների հետ, նկատում ենք, որ առաջին երեք խմբերում չեն ապահովել պարենամթերքի նվազագույն սպառման մակարդակը: Պարենային անվտանգության հաջորդ կարևոր բաղադրիչը պարենային ապահովվածության մակարդակի գնահատումն է, որը որոշվում է պարենային հաշվեկշռի միջոցով: Պարենային հաշվեկշիռը ագրեգացված և վերլուծական ցուցանիշների այնպիսի համակարգ է, որը ցույց է տալիս երկրի պարենամթերքների հիմնական տեսակների ձևավորման աղբյուրները՝ արտադրություն և ներմուծում, ինչպես նաև այդ պարենամթերքների օգտագործման վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն: Հաշվեկշիռը ներկայացվում է տարեկան կտրվածքով, որն անհրաժեշտ է տվյալ ժամանակաշրջանում պարենային անվտանգության և ապահովության վիճակը բնութագրելու համար: Ինչպես նաև հաշվեկշռի միջոցով է որոշվում պարենամթերքների հիմնական տեսակների ինքնաբավության մակարդակը: Ինքնաբավության մակարդակ ասելով հասկանում ենք երկրի տվյալ ապրանքի նկատմամբ պահանջարկի բավարարման աստիճանը սեփական միջոցների հաշվին, որը որոշվում է հետևյալ բանաձևով¹.

$$Ինք. մակ. = \frac{\text{Արտադրություն}}{(\text{Արտադրություն} + \text{Ներմուծում} - \text{Արտահանում})} \%^2$$

Հիմք ընդունելով ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները աղյուսակի տեսքով ներկայացնենք 2020 թվականին հանրապետության պարենային հաշվեկշիռը և դրանց ինքնաբավության մակարդակը(ԻՄ)

Վերլուծելով աղյուսակ 3-ը և անդրադառնալով առանձին պարենային ապրանքների ինքնաբավության, ներմուծման և արտադրության ցուցանիշներին՝ նկատում ենք, որ Հայաստանում ցորենի ինքնաբավության մակարդակը կազմում է 24.4%, իսկ դա նշանակում է 75,6% կախվածություն ներմուծումից և պահուստներում ունեցած ցորենի քանակից (Ի դեպ այս ցուցանիշը նախորդ տարի կազմել է 25.9%³): ՀՀ-ում միայն 2020թ.-ին ներմուծվել է մոտ 426.4 հազար տոննա ցորեն, որը ամբողջական առաջարկի 45.03%-ն է, այսինքն սեփական արտադրության հաշվին կարողանում ենք ապահովել ցորենի ընդամենը 13.9%-ը: Բանջարեղենների մասով Հայաստանում առկա է 103.9% ինքնաբավության մակարդակ: Բանջարեղեններից միայն համեմատաբար ցածր ինքնաբավության մակարդակ ենք ունեցել գազարի մասով, որը կազմել է 78,6%: Մրգերի մասով (բացի՝ խաղողից) Հայաստանում ինքնաբավության մակարդակը կազմում է 98.2%, որը բավականին բարձր ցուցանիշ է: Մերձարևադարձային մրգեր միշտ էլ ներմուծվելու են, սակայն Հայաստանը "մրգերի երկիր" լինելով պետք է կարողանա իր ռեսուրսները ճիշտ օգտագործել և, հատկապես, կենտրոնանալ ներքին

¹ ՀՀ ՎԿ, Հրապարակումներ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2021թ. հունվար-դեկտեմբեր, Հայաստանի Հանրապետության ազգային պարենային հաշվեկշիռ, 2019թ. էջ 77-78 https://armstat.am/file/article/f_sec_4_2021_3.pdf (դիտման օրը՝ 21.03.2022):

² Նույն տեղում, էջ 78

³ Նույն տեղում էջ 71

պահանջարկի բավարարման վրա: Օրինակ՝ ծիրանի մասով ՀՀ ինքնաբավության մակարդակը 2020թ.-ին կազմել 169.7%, մյուս մրգերի գծով ևս 100%-ից բարձր է եղել, բացառություն են կազմել միայն տխիլը և ընկույզը (98.1%, 98.4%)¹:

Աղյուսակ 3

ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռ, 2020թ.²

	Արտադրություն	Ներմուծում	Ամբողջական առաջարկ	Արտահանում	Օգտագործում	Ինք. աստիճան, %
Ցորեն	132.0	426.4	947.0	17.2	947.0	24.4
Գարի	90.0	31.3	130.0	0.3	130.0	74.4
Կարտոֆիլ	437.2	10.6	658.6	15.5	658.6	101.1
Բանջարեղեն և բոստան	819.4	54.6	1010.4	85.0	1010.4	103.9
Միրգ և հատապտուղ (բացի խաղողից)	274.3	103.7	416.6	98.6	416.6	98.2
Հատիկաընդեղենային մշակաբույսեր	4.1	7.0	13.4	0.1	13.4	37.3
Բուսական յուղ	0.3	31.4	35.6	0.0	35.6	0.9
Շաքար	28.8	50.7	111.1	3.8	111.1	38.0
Ձու	41.5	0.1	41.9	0.3	41.9	100.3
Կաթ	654.4	171.1	876.7	27.2	876.7	82.0
Տավարի միս	68.6	10.4	79.4	0.5	79.4	87.3
Խոզի միս	15.7	19.5	35.3	0.5	35.3	45.1
Ոչխարի և այծի միս	10.8	0.0	10.9	0.0	10.9	100.4
Թռչնի միս	12.6	40.3	55.8	0.2	55.8	23.9
Ձուկ	19.1	4.8	26.5	11.0	26.5	148.4
Խաղող	283.2	4.4	291.7	25.5	291.7	108.0

Մեր պարենային հաշվեկշռի ամենաձանր հատվածը բաժին է ընկնում ցորենին, բուսական յուղին, շաքարավազին, թռչնի և խոզի մսին և այլն: Շաքարի ինքնաբավության մակարդակը կազմում է 38.0%, որը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 35%-ով: 2019 թվականին հանրապետությունը սեփական արտադրության հաշվին կարողացել է ապահովել շաքարավազի 53.24%-ը, ներմուծվել է ընդամենը 25.2տ շաքարավազ, որը կազմել է ամբողջական պահանջարկի 22.4%: Մինչդեռ 2020 թվականին սեփական արտադրության հաշվին կարողացել ենք ապահովել շաքարավազի ընդամենը 25.7%-ը: Ներմուծումից կախվածությունը զգալի է:

Թռչնի մսի ինքնաբավության մակարդակը կազմում է 23.9%, այս ոլորտում հեշտությամբ կարելի է տանել այնպիսի քաղաքականություն, որ Հայաստանը զարգացնի իր սեփական թռչնաբուծարանները: Խոզի մսի ինքնաբավության մակարդակը կազմում է 45.1%, պետական աջակցության միջոցով նույնպես կարելի է հեշտ բազմացող այս կենդանու մթերումների մակարդակը կրկնակի

¹ ՀՀ ՎԿ, Հրապարակումներ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2021թ. հունվար-դեկտեմբեր, Հայաստանի Հանրապետության ազգային պարենային հաշվեկշիռ, 2019թ. էջ 75 https://armstat.am/file/article/f_sec_4_2021_3.pdf (դիտման օրը՝ 21.03.2022):

² Նույն տեղում էջ 74-76

ավելացնել: Սրանք այն խնդիրներն են, որոնք հաստատ անլուծելիներից չեն: Կաթի ներմուծումը ևս կարելի է կրճատել: Չնայած հարկ է նշել, որ այս պարենային ապրանքի մասով ունենք 80%-ից բարձր ինքնաբավության մակարդակ, մյուս մասն էլ պետք է ապահովել ներքին ռեսուրսների հաշվին:

Հայաստանում հացահատիկային մշակաբույսերի ինչպես ներմուծման, այնպես էլ արտադրության և սպառման մեջ գերակշռում է ցորենի տեսակարար կշիռը: 2019 թվականին ցորենի տեսակարար կշիռը հացահատիկային մշակաբույսերի օգտագործման մեջ կազմել է 72%: ՀՀ պարենային անվտանգության տեսանկյունից ցորենն ունի բացառիկ կարևորություն: Ցորենը և ցորենի ալյուրը Հայաստան ներկրվում է հիմնականում Ռուսաստանի Դաշնությունից: Հանրապետություն ներմուծվող ցորենի շուրջ 92%-ը ներկրվում է Ռուսաստանից, իսկ ցորենի ալյուրի՝ 97%-ը: Ցորեն ներկրում ենք նաև Ուկրաինայից, մոտ 7%-ը: Արդյունքում 2019 թվականին ռուսական ցորենի և ցորենի ալյուրի հաշվին ապահովվել է ներքին սպառման ծավալների 47%-ից ավելին¹:

Այսպիսով, ՀՀ ցորենի շուկայում ՌԴ-ն ունի գերիշխող դիրք: Սա նշանակում է, որ Հայաստանը ցորենի շուկայի պահանջարկը բավարարելու այլընտրանքային ուղիներ փնտրելու խնդիր ունի: Այս խնդիրը առավել է սրվել 2022 թվականի փետրվարի 24-ից, երբ Ռուսաստանի Դաշնությունը հատուկ ռազմական նշանակության գործողություն սկսեց Ուկրաինայի դեմ²: Սրա հետ մեկտեղ ռուսական կառավարությունը ընդունեց որոշում՝ սահմանափակել ՌԴ-ից հացահատիկային մշակաբույսերի արտահանումը որոշակի ժամանակահատվածում (Մարտի 15-ից մինչև հունիսի 30-ը ներառյալ)³:

Հայաստանին անհրաժեշտ է գտնել այլընտրանքային ուղի ցորենի ներքին պահանջարկը բավարարելու համար: Վերլուծելով աղյուսակ 4-ը կտեսնենք, որ Ղազախստանի ինքնաբավության մակարդակը ցորենի մասով բավականին բարձր է:

Աղյուսակ 4

Ցորենի ինքնաբավության մակարդակը ԵԱՏՄ երկրներում,⁴

Երկիր	2018թ	2019թ
Հայաստան	44,9	25,3
Բելառուս	80,7	91,7
Ղազախստան	147,6	124,9
Ղրղրզստան	89,1	89,1
Ռուսաստան	147,1	155,2

¹ Հարությունյան Կ. և ուրիշներ, Պարենային անվտանգության գնահատում և մոդելավորում կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում, - Եր.: Տնտեսագետ, «Ամբերդ մատենաշար 48» 2021, էջ 38-40:

² Обращение Президента Российской Федерации <http://kremlin.ru/events/president/news/67843/videos> (դիտման օրը՝ 21.03.2022)

³ О введении временного запрета на вывоз зерновых культур за пределы территории Российской Федерации, Постановление Правительство Российской Федерации от 14 марта 2022 г. № 362, Москва.

⁴ Концепция Коллективной продовольственной безопасности государств-членов Евразийского экономического союза, стр. 21 .

Ավելին Ղազախստանը ոչ միայն կարողանում է ապահովել ցորենի ներքին պահանջարկը, այլ նաև աշխարհում ցորենի արտահանման շուկայում ունի լավ դիրքեր: Միջազգային շուկայի 3%-ը ապահովում է այս երկրի կողմից: Կարծում ենք Ղազախստանը կարող է դիտարկվել որպես այլընտրանքային ուղի ցորենի ներմուծման համար: Ցորենի արտադրության ցուցանիշները վերլուծելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև Արցախի Հանրապետության ցորենի արտադրությանը, որի ծավալի զգալի մասը մատակարարվում էր Հայաստան: ԱՀ-ում ցորենի ինքնաբավության մակարդակը հասնում էր 115.3%-ի¹: Սակայն 2020 թվականի Արցախյան երկրորդ պատերազմից հետո Ադրբեջանական տիրապետության տակ անցան Հադրութի, Շահումյանի, Քաշաթաղի շրջանները, որտեղ արտադրվում էր հացահատիկային բերքի 47.4%-ը, Արցախը զրկվեց հացահատիկային բերքի շուրջ 67.4%-ից²: Արցախը ոչ միայն կարողանում էր ապահովել ցորենի ինքնաբավության մակարդակը այլ նաև 20.2 տ արտահանում էր Հայաստան: Հայաստանը զրկվեց նաև այս պաշարներից³:

Առհասարակ ցորենի ինքնաբավության ցածր մակարդակը և ներմուծումից կախվածությունը վկայում են ցորենի արտադրության ծավալների ավելացման ռազմավարական նշանակության մասին: Հայաստանը ունի ներուժ դառնալու ցորենի արտադրությամբ ինքնաբավ երկիր: 2020 թվականի հանրապետությունում բերքատվությունը կազմել է 22.5g/հա⁴: Բերքատվության մակարդակի բարձրացման միջոցով հնարավոր է արտադրել ավելին քան ներքին սպառման մակարդակն է:

Բուսական յուղի մասով պատկերն էլ ավելի վատթար է, ինքնաբավության մակարդակը 2020թ կազմել է 0,9%(Տե՛ս աղյուսակ 3-ը): Բուսական յուղի ներմուծման շուկայում գերիշխում է ռուսական տեսականին: Ըստ ոլորտի մասնագետների Հայաստանը ունի բավականաչափ ներուժ սոյայի յուղի տեղական արտադրության ձևավորման համար: «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ հանրապետությունում հնարավոր է ապահովել սոյայի 28-36g/հա բերքատվություն: Թեև միևնույն է այդ ցուցանիշով էական կզիջենք հարևան երկրներին, սակայն թույլ կտա որոշակի չափով բարձրացնել այս ապրանքատե-

¹ Հարությունյան Կ. և ուրիշներ, Պարենային անվտանգության գնահատում և մոդելավորում կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում,- Եր.: Տնտեսագետ,«Ամբերդ մատենաշար 48» 2021, էջ 41-44:

² Մուրադյան Մ., Արգենտինայի տնտեսական առաջընթացը. վերելքների և վայրէջքների ուղին, «Տնտեսական նորոգություններ». գործարկման ուղիները Հայաստանում, (Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում- Հատոր 2) , ՀՀ ԳԱԱ ՏԻ,- Եր 2021թ., էջ 314 <https://economics.sci.am/wp-content/uploads/2021/12/Gitazhoghov-2021-2-tparan-1.pdf> (դիտման օրը՝ 21.03.2022):


³ Հարությունյան Կ. և ուրիշներ, Պարենային անվտանգության գնահատում և մոդելավորում կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում,- Եր.: Տնտեսագետ,«Ամբերդ մատենաշար 48» 2021, էջ 44:

⁴ ՀՀ ՎԿ, հրապարակումներ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2021թ. հունվար-դեկտեմբեր, Պարենի առկայություն, էջ 41:

ասկի գծով ինքնաբավության մակարդակը¹:

Պարենային անվտանգությունը երկրի ազգային անվտանգության ապահովման կարևոր բաղադրիչն է և ուղղակիորեն կապված է բնակչության կենսամակարդակի բարձրացման հետ²:

Բնակչության կենսամակարդակը բնութագրող կարևոր ցուցանիշներից մեկը տնային տնտեսության եկամուտներն են և ամբողջական սպառողական ծախսերը: Վերջինս ներառում է տնային տնտեսությունների կողմից ձեռք բերված պարենային և ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների դիմաց կատարված վճարները³: Տնային տնտեսությունների սպառողական ծախսերը 2020թ.-ի համար ներկայացնենք գծապատկերի տեսքով:



Գծապատկեր 2. *Տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքը 2020թ.-ին՝ մեկ շնչի հաշվով միջին ամսական⁴*

Ինչպես երևում է գծապատկերից սպառողական ծախսերի մեծ մասը բաժին է ընկնում պարենամթերքների ձեռք բերմանը:

Այսպիսով, կարող ենք ասել, որ բնակչության կենսամակարդակի բարձրացման համար առաջնային խնդիրներից մեկը ֆիզիոլոգիական նորմերին համապատասխան պարենամթերքի ձեռք բերումն է, քանի որ որակյալ սննդամթերքից է կախված բնակչության առողջությունը, կյանքի երկարակեցությունը, աշխատելու ունակությունը, և առհասարակ կյանքի որակի բարձրացումը⁵:

Բնակչության կյանքի որակի բարձրացման կարևոր գործոններից մեկը սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովումն է:

¹ Հարությունյան Կ. և ուրիշներ, Պարենային անվտանգության գնահատում և մոդելավորում կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում, - Եր.: Տնտեսագետ, «Ամբերդ մատենաշար 48» 2021, էջ 51:
² Концепция Коллективной продовольственной безопасности государств-членов Евразийского экономического союза, стр. 3 .
³ ՀՀ ՎԿ, Հրապարակումներ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2021 Հայաստան Տնային տնտեսությունների եկամուտները, ծախսերը և հիմնական սննդամթերքի սպառումը, էջ 72,77:
⁴ Նույն տեղում, էջ 79:
⁵ Михаленко М. А., Обеспечение продовольственной безопасности России как условие повышения качества жизни, Научные труды Московского гуманитарного университета, № 3, 2017, стр. 131.

Մանդամթերքի ֆիզիկական մատչելիությունը բնակչության գնողունակ պահանջարկը բավարարող ծավալներով սննդամթերքի առաջարկի ապահովումն է, իսկ տնտեսական մատչելիությունը՝ բնակչության գնողունակ պահանջարկի մակարդակը, որն ապահովում է բնակչության կողմից սննդամթերքի ձեռքբերման հնարավորություն՝ ֆիզիոլոգիական նորմերին համապատասխան¹: Այսինքն՝ երկրի բնակչության կենսամակարդակի բարձրացման համար պետք է բնակչությանը ապահովել անհրաժեշտ քանակի պարենամթերքներով՝ որի ձեռք բերման համար նրանք կունենան բավարար միջոցներ:

Մույն հոդվածի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակի կողմից կատարված ուսումնասիրությունների և օրինաչափությունների հիման վրա բացահայտվել և հիմնավորվել են Հայաստանի պարենային անվտանգության և բնակչության կենսամակարդակի բարձրացումն ապահովող գործոններ, որոնց կիրառությունը իր բարենպաստ ազդեցությունը կունենա ՀՀ պարենային անվտանգության զարգացման վրա:

Եզրակացություններ: Ուսումնասիրելով պարենային անվտանգության նշանակությունը տնտեսական անվտանգության գործում, վերլուծելով պարենային ապահովման իրավիճակը Հայաստանում և կարևորելով դրա դերը բնակչության կենսամակարդակի բարձրացման համար, կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները:

- Պարենային անվտանգությունը համարվում է երկրի ռազմական անվտանգության անբաժան մասը: Ինքնին պարենային անվտանգությունը սահմանվում է որպես մի իրավիճակ, որտեղ մարդիկ ունեն ֆիզիկական, տնտեսական և սոցիալական հասանելիություն անհրաժեշտ քանակի և որակի պարենամթերքների ձեռք բերման համար:
- Պարենային անվտանգության կարևոր բաղադրիչը պարենային ինքնաապահովվածության մակարդակն է, որը Հայաստանում բարձր չէ: Ինքնաբավության մակարդակը առավել ցածր է հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի, թռչնի և խոզի մսի, բուսական յուղի և շաքարի մասով: Դրա հետ մեկտեղ ինքնաբավության բարձր մակարդակ է ապահովվում կարտոֆիլի, բանջարեղենի, մրգի, ոչխարի մսի, ձկան և ձվի մասով:
- Առաջնային կարևորության պարենային խումբը, որի մասով պետք է հասնել ինքնաբավության մակարդակի ապահովման հացահատիկն է: Մտահոգիչ է ներկայիս պատկերը ռուս-ուկրաինական պատերազմի հետ կապված: Քանզի Հայաստանը հացահատիկ ներմուծում է բացառապես ռուսական և ուկրաինական շուկաներից հրատապ է դարձել նոր շուկաների որոնումը: Որպես այդպիսին դիտարկվել է Ղազախստանի Հանրապետությունը:
- Ուսումնասիրություններից ցույց տվեցին, որ հանրապետությունում ցածր է նաև պարենի մատչելիության մակարդակը: Թեև Հայաստանում չկա սովի և սննդամթերքի խիստ անբավարարության իրավիճակ, այդուհանդերձ բնակ-

¹ ՀՀ օրենքը Պարենային անվտանգության ապահովման մասին, Ընդունված է 2002 թվականի մայիսի 7-ին, ՀՕ-339:

չության ավելի քան 56,4%-ը չի կարողանում ապահովել նվազագույն կենսապահովման էներգետիկ արժեքը:

Դիտարկելով պարենային անվտանգությունը որպես երկրի բնակչության կենսամակարդակի բարձրացման գործոն առաջարկում ենք.

- Խթանել հայրենական արտադրանքների արտադրությունը, առաջնային անհրաժեշտության պարենամթերքների գծով ինքնաբավության մակարդակը հասցնելով նվազագույնը 75-80%-ի: Տորենի ինքնաբավության մակարդակի բարձրացման համար մշակել բարձր բերքատվության սորտեր, բուսական յուղի համար զբաղվել սոյայի և սոյայի յուղի արտադրությամբ, որի հնարավորությունները բավականին բարձր են Հայաստանում:
- Ֆորսմաժորային իրավիճակներից խուսափելու համար, ինչպես օրինակ կապված 2020թ կորոնավիրուսային համավարակի, արցախյան երկրորդ պատերազմական իրավիճակի, 2022թ. ռուս-ուկրաինական հակամարտության հետ, անհրաժեշտ է ստեղծել առաջնային անհրաժեշտության պարենամթերքների 15-20%-ի չափով պետական պահուստ: Վերջինիս ներդրման համար ձևավորել այնպիսի կառուցակարգեր, որոնք կնպաստեն գյուղատնտեսական արտադրանքի իրացման և պարենային շուկայի իրավիճակի բարելավմանը, պետական միջոցների արդյունավետ ու խնայողաբար օգտագործմանը:

Օգտագործված գրականության ցանկ

2. Ավետիսյան Ս., Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրներ/. –Եր.: Տնտեսագետ, 2014 – էջ. 96- («Ամբերդ» մատենաշար):
3. Հարությունյան Կ. և ուրիշներ, Պարենային անվտանգության գնահատում և մոդելավորում կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում,- Եր.: Տնտեսագետ, «Ամբերդ մատենաշար 48» 2021, էջ 178
4. ՀՀ Վիճակագրական կոմիտե
5. ՀՀ օրենքը Պարենային անվտանգության ապահովման մասին, Ընդունված է 2002 թվականի մայիսի 7-ին, ՀՕ-339
6. Մարկոսյան Ա. Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ. — Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2005. – էջ 250
7. Մուրադյան Մ., Արգենտինայի տնտեսական առաջընթացը. վերելքների և վայրէջքների ուղին, «Տնտեսական նորոգություններ». գործարկման ուղիները Հայաստանում, (Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում- Հատոր 2) , ՀՀ ԳԱԱ ՏԻ,- Եր 2021թ., էջ 306-322 <https://economics.sci.am/wp-content/uploads/2021/12/Gitazhoghov-2021-2-tparan-1.pdf>
8. Չախմախյան Բ., Մկրտչյան Վ., Հայաստանի Հանրապետությունում պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրների շուրջ, Հայաստան «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, N2, Եր- 2004թ, էջ 21-40

9. Տնտեսական հետազոտությունների և զարգացման աջակցության կենտրոն (ERDSC), ՀՀ բնակչության եկամուտներն իշխանափոխությունից հետո, «Լույս» հիմնադրամ, 2021թ, էջ 34
https://www.luys.am/img/artpic/small/37461a198e9175753a31incomes_report_final.pdf
10. Концепция Коллективной продовольственной безопасности государств-членов Евразийского экономического союза, стр. 37
<https://docs.eaeunion.org/pd/ru-ru/0123907/>
11. Михаленко М. А., Обеспечение продовольственной безопасности России как условие повышения качества жизни, Научные труды Московского гуманитарного университета, № 3, 2017, стр. 129-137
12. НИЦ МКБК, Водная, продовольственная и энергетическая безопасность в Центральной Азии: вводный анализ - преимущества межотраслевых решений, 2021 г., стр. 43
<https://www.oecd.org/env/outreach/Water%20Food%20Security%20in%20Central%20Asia%20RUS.pdf>
13. О введении временного запрета на вывоз зерновых культур за пределы территории Российской Федерации, Постановление Правительство Российской Федерации от 14 марта 2022 г. № 362, Москва
14. Обращение Президента Российской Федерации
<http://kremlin.ru/events/president/news/67843/videos>
15. Статкомитет СНГ, Методологические рекомендации по системе показателей для оценки состояния продовольственной безопасности в странах СНГ, Москва 2019, стр. 165
16. Тихомирова В. А., Продовольственная безопасность: сущность понятия, //Вестник РЭУ им. Г. В. Плеханова 2015, № 6 (84), стр. 124
17. Ускова Т.В., Селименков Р.Ю., Анищенко А.Н., Чекавинский. А.Н., Продовольственная безопасность региона, монография, – Вологда: ИСЭРТ РАН, 2014. –102 с.
18. ФАО «Положение в области продовольственной безопасности и питания в мире -2021», Глава 2 Продовольственная безопасность и питание в мире стр. 240 <https://www.fao.org/3/cb4474ru/cb4474ru.pdf>
19. World Food Programme (WFP), Research, Assessment and Monitoring Division. 2020, p. 43 <https://docs.wfp.org/api/documents/WFP-0000074198/download/>
20. World Health Organization, <https://www.who.int/ru/emergencies/diseases/novel-coronavirus-2019>
21. <https://data.worldbank.org/indicator/SN.ITK.DEFC.ZS> (դիտման օրը 14.03.2022)

References

1. Avetisyan S., Hayastani Hanrapetowt'yan parenayin anvtangowt'yan hratap xndirner/. –Er.: Tntesaget, 2014 – e'j.96- («Amberd» matenashar):
2. Harowt'yownyan K. & ovrishner, Parenayin anvtangowt'yan gnhatowm & modelavorowm kartwajhamket & erkarajhamket hatvac'nerowm,- Er.: Tntesaget,

- «Amberd matenashar 48» 2021, e'j 178
3. HH Vitwakagrakan komite
 4. HH o'renqy' Parenayin anvtangowt'yan apahovman masin, Y'ndownvac' e' 2002 t'vakani mayisi 7-in, HO'-339
 5. Markosyan A. Tntesakan anvtangowt'yan himnaxndirneri'. met'odabanowt'yown & ardyownqner. — Er.: «Noravanq» GKH, 2005. – e'j 250
 6. Mowradyan M., Argentinayi tntesakan ar'ajy'nt'acy'. verelqneri & vayre'jqneri owghin, «Tntesakan norogowt'yownner». gorc'arkman owghinery' Hayastanowm, (Social-tntesakan zargacman ardi himnaxndirneri' Hayastani Hanrapetowt'yownowm- Hator 2), HH GAA TI,- Er 2021t', e'j 306-322 <https://economics.sci.am/wp-content/uploads/2021/12/Gitazhoghov-2021-2-tparan-1.pdf>
 7. Chaxmaxchyan B., Mkrtchyan V., Hayastani Hanrapetowt'yownowm parenayin anvtangowt'yan apahovman himnaxndirneri showrj, Hayastan «Noravanq» gitakrt'akan himnadrami teghekagir, N2, Er- 2004t', e'j 21-40
 8. Tntesakan hetazotowt'yownneri & zargacman ajakcowt'yan kentron (ERDSC), HH bnakchowt'yan ekamowtnern ishxanap'oxowt'yonic heto, «Lowys» himnadram, 2021t',e'j34
https://www.luys.am/img/artpic/small/37461a198e9175753a31incomes_report_final.pdf
 9. Konceptija Kollektivnoj prodovol'stvennoj bezopasnosti gosudarstv-chlenov Evrazijskogo jekonomicheskogo sojuza, str. 37 <https://docs.eaeunion.org/pd/ru-ru/0123907/>
 10. Mihalenko M. A., Obespechenie prodovol'stvennoj bezopasnosti Rossii kak uslovie povysheniya kachestva zhizni, Nauchnye trudy Moskovskogo gumanitarnogo universiteta, # 3, 2017, str. 129-137
 11. NIC MKVK, Vodnaja, prodovol'stvennaja i jenergeticheskaja bezopasnost' v Central'noj Azii: vvodnyj analiz - preimushhestva mezhhotraslevykh reshenij, 2021 g.,str.43
<https://www.oecd.org/env/outreach/Water%20Food%20Security%20in%20Central%20Asia%20RUS.pdf>
 12. O vvedenii vremennogo zapreta na vyvoz zernovykh kul'tur za predely territorii Rossijskoj Federacii, Postanovlenie Pravitel'stvo Rossijskoj Federacii ot 14 marta 2022 g. # 362, Moskva
 13. Obrashhenie Prezidenta Rossijskoj Federacii
<http://kremlin.ru/events/president/news/67843/videos>
 14. Statkomitet SNG, Metodologicheskie rekomendacii po sisteme pokazatelej dlja ocenki sostojanija prodovol'stvennoj bezopasnosti v stranah SNG, Moskva 2019, str. 165
 15. Tihomirova V. A., Prodovol'stvennaja bezopasnost': sushhnost' ponjatija, //Vestnik RJeU im. G. V. Plehanova 2015, # 6 (84), str. 124
 16. Uskova T.V., Selimenkov R.Ju., Anishhenko A.N., Chekavinskij. A.N., Prodovol'stvennaja bezopasnost'regiona, monografija, – Vologda : ISJeRT RAN, 2014. –102 c.
 17. FAO «Polozhenie v oblasti prodovol'stvennoj bezopasnosti i pitaniya v mire -2021», Glava 2 Prodovol'stvennaja bezopasnost' i pitanie v mire str. 240

<https://www.fao.org/3/cb4474ru/cb4474ru.pdf>

18. World Food Programme (WFP), Research, Assessment and Monitoring Division. 2020, p. 43 <https://docs.wfp.org/api/documents/WFP-0000074198/download/>
19. World Health Organization, <https://www.who.int/ru/emergencies/diseases/novel-coronavirus-2019>
20. <https://data.worldbank.org/indicator/SN.ITK.DEFC.ZS> (դիտման օրը 14.03.2022)

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Մերի Համբարձումի Մուրադյան

Համառոտագիր: Հոդվածում ներկայացված է պարենային անվտանգության կարևորությունը երկրի տնտեսական զարգացման ու բնակչության կենսամակարդակի բարձրացման գործում, որով էլ պայմանավորված է հոդվածի *արդիականությունը*: Առաջնային ուշադրություն է դարձվել պարենային ապահովվածության և հիմնական սպառման պարենամթերքների ինքնաբավության մակարդակի ավելացման միջոցով բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա: Հոդվածում *նպատակ է* դրվել ուսումնասիրել պարենային անվտանգության և բնակչության կենսամակարդակի բարձրացման փոխկապակցվածությունը, գտնել ուղիներ ՀՀ-ում պարենային անվտանգության ապահովման միջոցով բնակչության կենսամակարդակի բարձրացման համար: Նպատակին հասնելու համար *խնդիր է* դրվել ուսումնասիրել պարենային անվտանգության էությունը, վերլուծել պարենային անվտանգության հիմնախնդիրների էվոյուցիան և բացահայտել ՀՀ-ում պարենային ապահովման թույլ կողմերը

ՀՀ պարենային անվտանգության համեմատական, վիճակագրական *մեթոդների* հիման վրա *կատարվել են վերլուծություններ*, որոնց արդյունքում պարզ է դարձել որ ՀՀ-ն մի շարք ապրանքատեսակների գծով ունի ներմուծումից կախվածություն: Հոդվածում մշակվել են մեթոդներ այդ կախվածությունը նվազեցնելու համար:

Ի մի բերելով աշխատանքում կատարված ուսումնասիրությունները՝ նշենք յուրաքանչյուր երկիր իրականացնելով կարգավորումներ ագրարային ոլորտում, պետք է նախ և առաջ ուշադրություն դարձնի պարենային անվտանգության և ապահովման այն գործոններին, որոնք առանձնահատուկ են իր երկրի պայմանների համար: Հայաստանի համար թերևս ամենաբարդ հանգույցը կարող ենք համարել բնակչության ցածր գնողունակությունը:

Սույն հոդվածի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակի կողմից կատարված ուսումնասիրությունների և օրինաչափությունների հիման վրա բացահայտվել և հիմնավորվել են Հայաստանի պարենային անվտանգության և բնակչության կենսամակարդակի բարձրացումն ապահովող գործոններ, որոնց կիրառությունը իր բարենպաստ ազդեցությունը կունենա ՀՀ պարենային անվտանգության զարգացման վրա:

Հողվածում համակարգված տեսքով ներկայացնելով Հայաստանի պարենային անվտանգության առանձնահատկությունները, հիմնավոր է համարվել այն եզրահանգումը, որ հանրապետությունում առկա են բոլոր հնարավորությունները պարենամթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացման համար: Ներկայացվել են ինքնաբավության մակարդակի և պարենային անվտանգության բարձրացման համար ուղիներ:

Բանալի բառեր: Պարենային անվտանգություն, պարենային ինքնաբավություն, սպառողական զամբյուղ, ֆիզիոլոգիական նորմեր, ֆիզիկական և տնտեսական մատչելիություն, բնակչության կենսամակարդակ, պարենային հաշվեկշիռ, ներմուծում, գնողունակություն:

ПРОДОВОЛЬСТВЕННАЯ БЕЗОПАСНОСТЬ КАК ФАКТОР ПОВЫШЕНИЯ УРОВНЯ ЖИЗНИ НАСЕЛЕНИЯ РА

Мери Амбарцумовна Мурадян

Аннотация: В статье представлено значение продовольственной безопасности в экономическом развитии страны и повышении уровня жизни населения, чем и обусловлена актуальность статьи. Приоритетное внимание уделялось повышению уровня жизни населения за счет повышения уровня продовольственной безопасности, самообеспеченности основными продуктами питания. **Цель** статьи - изучить взаимосвязь между продовольственной безопасностью и повышением уровня жизни населения, найти пути повышения уровня жизни населения за счет обеспечения продовольственной безопасности в Армении. Для достижения цели была поставлена задача изучить сущность продовольственной безопасности, проанализировать эволюцию вопросов продовольственной безопасности, выявить слабые стороны продовольственной безопасности в Армении.

Были проведены анализы на основе сравнительных, статистических методов продовольственной безопасности в Республике Армения, в результате чего выяснилось, что Республика Армения зависит от импорта по ряду товаров. В статье разработаны методы снижения ту зависимость.

Подводя итоги исследований, отметим: каждая страна при внедрении правил в сельскохозяйственном секторе должна в первую очередь обращать внимание на факторы продовольственной безопасности, характерные для условий собственной страны. Пожалуй, самым сложным хабом для Армении является низкая покупательная способность населения.

Научная новизна статьи заключается в том, что на основе проведенных автором исследований и закономерностей выявлены и обоснованы факторы обеспечения продовольственной безопасности Армении и роста населения, применение которых окажет положительное влияние на развитие продовольственной безопасности Армении.

В статье систематически представляя особенности продовольственной безопасности Армении, обоснован вывод, что в стране есть все возможности для повышения

уровня продовольственной самообеспеченности. Внедрены пути повышения самообеспеченности и продовольственной безопасности.

Ключевые слова: Продовольственная безопасность, продовольственная самообеспеченность, потребительская корзина, физиологические нормы, физическая и экономическая доступность, уровень жизни населения, продовольственный баланс, импорт, покупательная способность.

FOOD SECURITY AS A FACTOR OF IMPROVING LIVING STANDARDS OF THE RA POPULATION

Mery Hambardzum Muradyan

Abstract. The article presents the importance of food security in the economic development of the country and improving the standard of living of the population, which is the reason for the relevance of the article. Priority attention was paid to improving the standard of living of the population by increasing the level of food security, self-sufficiency in basic foodstuffs. The purpose of the article is to study the relationship between food security and raising the standard of living of the population, to find ways to improve the standard of living of the population by ensuring food security in Armenia. To achieve the goal, the task was to study the essence of food security, analyze the evolution of food security issues, and identify the weaknesses of food security in Armenia.

Analyses were carried out on the basis of comparative, statistical methods of food security in the Republic of Armenia, as a result of which it turned out that the Republic of Armenia is dependent on imports for a number of goods. The article developed methods to reduce that dependence.

Summing up the results of the research, we note that each country, when implementing rules in the agricultural sector, should first of all pay attention to the food security factors characteristic of the conditions of its own country. Perhaps the most difficult hub for Armenia is the low purchasing power of the population.

The scientific novelty of the article lies in the fact that, based on the research and regularities conducted by the author, the factors for ensuring the food security of Armenia and population growth have been identified and substantiated, the use of which will have a positive impact on the development of food security in Armenia.

In the article, systematically presenting the features of the food security of Armenia, the conclusion is substantiated that the country has every opportunity to increase the level of food self-sufficiency. Ways to increase self-sufficiency and food security have been introduced.

Keywords. Food security, food self-sufficiency, consumer basket, physiological norms, physical and economic accessibility, standard of living of the population, food balance, imports, purchasing power.